ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/56

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Արթմաշին» ՍՊԸ-ի 07.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Արթմաշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արթմաշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 07.04.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև մրցույթ):

Մրցույթի առարկան է հանդիսանում՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերումը:

Հրավերով պահանջվել է բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիա:

Վերոնշյալ մրցույթի հրավերի 2-րդ մասի 2.5.1.ա կետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հրավերով սահմանված լիցենզիային համապատասխան աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Մրցույթի Հրավերի 2-րդ մասի 2.5.4. ա կետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

. 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով (ստորև ներկայացվող յուրաքանչյուր որակավորումով պահանջվող առնվազն 1 (մեկ) մասնագետ)՝

N	Որակավորումը	Մասնագիտական փորձը		
		գործունեության ոլորտը	կատարած աշխատանքը	նվազագույն մասնագիտական փորձը
1	ճարտարագետ-շինարար	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանք
2	հնագետ	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործում	նմանատիպ (ժամանակագրություն կամ շերտագրություն ունեցող) հուշարձանի տարածքի առնվազն մեկ ՝ պեղում	վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում հուշարձանի հնագիտական հետախուզման և պեղման 1 (մեկ) տարվա փորձ

3	որմնադիր վարպետ	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի (պատմաճարտարահետակ ան) ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ ամրակայման, նորոգման կամ վերականգնման աշխատանք (ընդ որում՝ շաղախի ներարկման)

3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով (ստորև ներկայացվող յուրաքանչյուր որակավորումով պահանջվող առնվազն 1 (մեկ) մասնագետ)՝

	Որակավորումը	**Մասնագիտական փորձը**		
		գործունեության ոլորտը	**կատարած աշխատանքը**	**նվազագույն մասնագիտական փորձը**
1	ճարտարագետ-շինարար	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանք
2	որմնադիր վարպետ	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի (պատմաճարտարահետակա ն) ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ ամրակայման, նորոգման կամ վերականգնման աշխատանք (ընդ որում՝ շաղախի ներարկման)

Մրցույթի Հրավերի 2-րդ մասի 2.5.4. բ. կետի համաձայն՝

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

1-ին չափաբաժնի համար՝ ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքներ.

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ

Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ
Շաղախի ներարկիչ սարք	ցանկացած	1 հատ

2-րդ չափաբաժնի համար՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Քոբայր ե/գ կայարանի) Քոբայրավանքի (սեղանատան) վերականգնման աշխատանքներ.

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Բեռնատար մեքենա	ցանկացած	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ
Հավաքվող կոնստրուկցիաներով ամբարձիչ /25 մ. բաձրությ./	ցանկացած	1 հատ

3-րդ չափաբաժնի համար՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքի (Սբ Ամենափրկիչ եկեղեցու) նորոգման աշխատանքներ.

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ
Շաղախի ներարկիչ սարք	ցանկացած	1 հատ

4-րդ չափաբաժնի համար՝ ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Մայրավանքի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ.

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ
Շարժական էլեկտրասնուցող սարք	ցանկացած (220 վլտ.)	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ
Շաղախի ներարկիչ սարք	ցանկացած	1 հատ

5-րդ չափաբաժնի համար՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու (կառույցների) ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ.

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ

Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ

6-րդ չափաբաժնի համար՝ ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի Գոշավանքի Սբ Աստվածածին եկեղեցու նորոգման աշխատանքներ.

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ

Վերոնշված մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արթմաշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և մրցույթի 1, 3, 4 և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 05.03.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1, 3, 4 և 6-րդ չափաբաժինների մասով «Արթմաշին» ՍՊԸ-ին և 5-րդ չափաբաժնի մասով «Առվա-Երկիր» ՍՊԸ-ին էլեկտրոնային համակարգով ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Թիվ 4 արձանագրության 1.7 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներառված մասնագետ՝ ճարտարագետ-շինարարի տվյալներում բացակայում էր առնվազն մեկ պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգնման, որմնադիր վարպետի տվյալներում՝ առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգնման և հնագետի տվյալներում՝ նմանատիպ հուշարձանի տարածքի առնվազն մեկ հրավերով պահանջվող աշխատանքների կատարած լինելը հավաստող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 1.8 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված չեն առաջարկվող տեխնիկական

միջոցներ՝ «Ամբարձիչի», «Շաղախի ներարկիչի» և «Էլեկտրասնուցող սարքի» տեխնիկական անձնագրերը:

Նույն արձանագրության 1.9 կետի համաձայն՝ մրցույթի գանահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և «Արթմաշին» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկել՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00 ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից ստացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Արձանագրության 1.3 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գծով առկա անհամապատասխանությունները չեն շտկվել: Մասնավորապես՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացված աշխատակազմում ներառված մասնագետ՝ որմնադիր վարպետների՝ Անդրանիկ Կնյազյանի, Եղիազար Մխիթարյանի, Գրիգոր Բաբեյանի և Համլետ Հակոբյանի տվյալներում՝ առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգման պահանջվող աշխատանքների կատարած լինելը հավաստող փաստաթղթերը նորից չեն ներկայացվել:

Մասնակցի ներկայացված շտկված փաստաթղթերում գործատու «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ն փոխարինվել է այլ գործատուով՝ «Արթմաշին» ՍՊԸ-ով, իսկ որմնադիր-վարպետները այլ աշխատակիցներով, որոնց տվյալներում՝ առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերանորոգման հրավերով պահանջվող աշխատանքների կատարած լինելը հավաստող փաստաթղթերում բացակայում են նմանատիպ աշխատանքներ կատարած լինելը հավաստող փաստաթղթերը: «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 5.2 հավելվածում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներ՝ Արմեն Մնացականյանի, Արշակ Գաբրիելյանի, Անդրանիկ Հայրապետյանի և Մովսես Շահվերդյանի աշխատանքային փորձը չի համարվում նմանատիպ: Մասնակիցը, որպես որմնադիրների կատարված աշխատանքների պայմանագիր, ներկայացրել է ՀՀ մշակույթի նախարարության հետ 19.07.2017թ. կնքված «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում /ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Մեծամորի սրբարանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ/ և

ՀՀ մշակույթի նախարարության հետ 07.07.2016թ. կնքված «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԲԱՇՁԲ-16/80» ծածկագրով պայմանագրի շրջանակներում /Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի վերանորոգման/ աշխատանքների կատարած լինելը: Մինչդեռ այդ աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ մշակույթի նախարարության կողմից հայտարարված հրավերներում պահանջվող աշխատանքային ռեսուրսների մասով որմնադրի պահանջ չի եղել, ինչը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ այդ աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվներում որմնադրի կողմից կատարվելիք աշխատանքներ չեն նախատեսվել: Ընդ որում, «ՀՀՄՆ-ԲԲԱՇՁԲ-17/38-5» ծածկագրով նախատեսված աշխատանքները ավարտված չեն և դրա կատարման ժամկետը սահմանված է 30.06.2018թ.:

Նույն արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի գծով առկա անհամապատասխանությունները չեն շտկվել:

Նույն արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել անբավարար:

Համաձայն նույն արձանագրության 1.6 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատվել է անբավարար:

. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ա) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով.

ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1853-Ն որոշմամբ հաստատվել է տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը: Վերոհիշյալ որոշմամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցները (ավտոմեքենան/մոտոցիկլետը) պետական հաշվառում անցնելուց հետո ստանում են գրանցման վկայական՝ տեխնիկական անձնագիր:

Ավելին, սույն ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ պետական հաշվառման են ենթարկվում և տեխնիկական անձնագիր ստանում 50 խոր. սմ և ավելի շարժիչի բանվորական ծավալ ունեցող, ինչպես նաև 50 կմ/ժ և ավելի առավելագույն արագություն զարգացնող ավտոմոտոտրանսպորտային միջոցը:

«Արթմաշին» ՍՊԸ-ն մասնակցել է «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին և համապատասխան հայտարարությամբ հավաստել է, որ համապատասխանում է հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, տվյալ դեպքում «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին և աշխատանքների կատարման համար ունի համապատասխան տեխնիկական միջոցներ՝ ինքնաթափ մեքենա, ամբարձիչ, բետոնախառնիչ սարք, շարժական էլեկտրասնուցող սարք և շաղախի ներարկիչ սարք:

Որպես ապացույց, որ «Արթմաշին» ՍՊԸ-ն ունի «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթով պահանջվող տեխնիկական միջոցներ, Ընկերությունը ներկայացրել է ամբարձիչի, բետոնախառնիչ սարքի, շարժական էլեկտրասնուցող սարքի և շաղախի ներարկիչ սարքի մասով գնման ակտը, ապրանքի մատակարարման էլեկտրոնային հարկային հաշիվը, տեխնիկայի ֆոտոներ, ինչպես նաև այլ ապացույցներ, որոնք պացուցում են, որ տվյալ տեխնիկական միջոցները կազմում են Ընկերության հաշվեկշռի (բալանսի) մաս:

Սակայն պատվիրատուի կողմից այս տեխնիկայի մասով պահանջվել է ներկայացնել տեխնիկական անձնագիր, այն դեպքում, երբ ամբարձիչը, բետոնախառնիչ սարքը, շարժական էլեկտրասնուցող սարքը և շաղախի ներարկիչը ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1853-Ն որոշման համաձայն՝ չի հանդիսանում տրանսպորտային միջոց, չի կարող անցնել պետական հաշվառում և դրա հետևանքով նրան չի կարող տրամադրվել տեխնիկական անձնագիր՝ գրանցման վկայական:

Օրինակ, Ընկերությունը հենց առաջին փուլով ներկայացրել է մրցույթի հրավերով պահանջված ինքնաթափ մեքենայի տեխնիկական անձնագիրը՝ այդ անձնագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով գոյություն ունենալու պատճառով:

Գտնում ենք, որ նման պայմաններում կարևորն այն է, որ «Արթմաշին» ՍՊԸ-ն ունեցել է համապատասխան տեխնիկական միջոցները, ինչը ապացուցվել է ընկերության կողմից ներկայացրած համապատասխան փաստաթղթերով, իսկ նշված տեխնիկայի նկատմամբ տեխնիկական անձնագիր պահանջելը այն դեպքում, երբ նման տեխնիկական անձնագիր գոյություն ունենալ չի կարող, հանդիսանում է ոչ իրավաչափ գործողություն:

բ) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով.

Ինչպես արդեն նշվել է, «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով հրավերի առարկան է հանդիսանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերումը:

Նույն հրավերի 2.5.1. ա կետի համաձայն՝ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հրավերով սահամնված լիցենզիային համապատասխան աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Սակայն մրցույթի նման գնման առարկայի (ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերում), պահանջված լիցենզիայի, ինչպես նաև մասնագիտական փորձառության պայմաններում, երբ որպես համանման է սահմանվել բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի համապատասխան աշխատանքների կատարման պայմանագրերը, «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից փաստորեն սահմանվել են աշխատանքային ռեսուրսի հետևյալան պահանջներ՝ համապատասխան աշխատակից, որի գործունեության ոլորտն է՝ միայն պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործումը, կատարած աշխատանքը՝ միայն պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայում, նորոգում կամ վերականգնում, իսկ մասնագիտական փորձը՝ միայն պատմության և մշակույթի հուշարձանի ոլորտը:

Բանն այն է, որ ցանկացած շինարարական ընկերություն, ունենալով համապատասխան լիցենզիա, և լիզենզիային համապատասխան իրականացրած նմանատիպ պայմանագիր, տեսականորեն կարող է մասնակցել նման գնման առարկա ունեցող մրցույթի, որի

արդյունքում առկա կլինի իրական մրցակցություն և համապատասխանաբար, նաև գնային առաջարկների բազմազանություն:

Սակայն սահմանելով աշխատանքային ռեսուրսի նման չափանիշներ, գնահատող հանձնաժողովի կողմից անհիմն կերպով բարդացվել է մասնակցությունը տվյալ մրցույթին, ինչը անխուսափելիորեն կառաջացնի մասնակիցների շրջանակի նեղացում և առաջարկվող գների թանկացում:

Օրինակ, «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից որպես աշխատաքային ռեսուրս ներկայացվել են բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում աշխատանքներ իրականացրած մասնագետներ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ոչ իրավաչափ պահանջվել են կոնկրետ առանձին ոլորտի ներկայացուցիչներ, այսինքն շինարարներ, որոնք ներգրավված են բացառապես պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի շինարարական աշխատանքների ոլորոտում:

Գտնում ենք, որ «Արթմաշին» ՍՊԸ-ն ապացուցել է, որ համապատասխանում է աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշներին, և ունի բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում աշխատանքներ իրականացրած համապատասխան մասնագետներ:

Գտնում ենք, որ նման պայմաններում իրավաչափ չէ գնահատող հանձնաժողովի պահանջը՝ ներկայացնելու տվյալ ոլորտի մասնագետների այնպիսի փաստաթղթեր, որոնք կապացուցեն, որ վերջիններս աշխատել են հենց պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգնման ոլորոտում, քանզի վերոհիշյալ փաստը չի արձանագրվում թե աշխատանքային գրքույկի և թե աշխատանքային պայմանագրի մեջ, ինչը անհնարին է դարձնում ոչ իրավաչափ պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը խախտել ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները»:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդից խնդրել է՝

• Դադարեցնել «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.5 կետով «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

• Դադարեցնել «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության

1.6-րդ կետով «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

• Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները գնահատել «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Ռազմիկ Մայիլյանը, ինչպես նաև Ընկերության շահերի պաշտպանության կապակցությամբ Բողոքի քննությանը ներգրավված «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ մշակույթի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ մշակույթի նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ 11.04.2018թ. թիվ 02/01.91/2222-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 02.02.2018թ. հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էր ներկայացրել թվով 13 մասնակից, այդ թվում՝ «Արթմաշին» ՍՊԸ-ն:

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված է, որ.

«2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:»:

Հրավերի 2.5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է ընթացակարգի մասնակցին ներկայացվող՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը, դրա գնահատման

կարգը և կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն ըստ ընթացակարգի չափաբաժինների: Նշված ենթակետի (գ) պարբերությամբ սահմանված է, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:»:

Հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանվել է ընթացակարգի մասնակցին ներկայացվող՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը, դրա գնահատման կարգը և կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներն ըստ ընթացակարգի չափաբաժինների: Նշված ենթակետի (գ) պարբերությամբ սահմանված է, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, նախկինում կնքված աշխատանքային պայմանագրեր, աշխատանքային գրքույկ և այլն) պատճենները:»:

«Արթմաշին» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից՝ ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1-ին կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Արթմաշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 05.03.2018 թ. ժամը 15:00-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

«Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում):

Գտնում ենք, որ «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արթմաշին» ՍՊԸ-ի «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատումն իրականացվել է ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է «Արթմաշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել, միաժամանակ, մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով դրանք ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում «Արթմաշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվել է ՍՑ-ԷՍ-2018/30 պաշտոնական ընթացակարգ, որի քննության 28.03.2018թ. կայացած առաջին նիստին մասնակցել են ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչները:

Հայտնում ենք նաև, որ «Արթմաշին» ՍՊԸ-ի հայտի մերժման արդյունքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել, որոնց գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից որոշվել են «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգի ըստ չափաբաժինների ընտրված մասնակիցները, իսկ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը 07.04.2018 թ. հրապարակվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկագրում»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արսեն Սողոմոնյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Արթմաշին» ՍՊԸ-ի 07.04.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.02.2018թ. հայտերի բացման նիստի N 3, 05.03.2018թ. նիստի N4, 12.03.2018թ. նիստի N5, 15.03.2018թ. նիստի N6 արձանագրությունները, Պատվիրատուի 11.04.2018թ. թիվ 02/01.91/2222-18 գրությամբ Բողոքի վերաբերյալ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 13 կազմակերպություններ, որոնց թվում՝ «Արթմաշին» ՍՊԸ-ն:

16.02.2018թ. հայտերի բացման նիստի N 3 արձանագրության 1.7 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արթմաշին» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 05.03.2018թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 1.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1, 3, 4 և 6-րդ չափաբաժինների մասով «Արթմաշին» ՍՊԸ-ին «armeps.am» էլեկտրոնային համակարգով ոչ ավտոմատ եղանակով ձանուցում է ուղարկվել՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը.

- 1.7 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներառված մասնագետ՝ ճարտարագետ-շինարարի տվյալներում բացակայում էր առնվազն մեկ պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգնման, որմնադիր վարպետի տվյալներում՝ առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգնման և հնագետի տվյալներում՝ նմանատիպ հուշարձանի տարածքի առնվազն մեկ հրավերով պահանջվող աշխատանքների կատարած լինելը հավաստող փաստաթղթերը.

- 1.8 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված չեն առաջարկվող տեխնիկական միջոցներ՝ «Ամբարձիչի», «Շաղախի ներարկիչի» և «Էլեկտրասնուցող սարքի» տեխնիկական անձնագրերը.

- 1.9 կետի համաձայն՝ մրցույթի գանահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և «Արթմաշին» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկել՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 15.03.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության՝

- 1.2 կետի համաձայն՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից ստացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը.

- 1.3 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գծով առկա անհամապատասխանությունները չեն շտկվել: Մասնավորապես՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացված աշխատակազմում ներառված մասնագետ՝ որմնադիր վարպետների՝ Անդրանիկ Կնյազյանի, Եղիազար Մխիթարյանի, Գրիգոր Բաբեյանի և Համլետ Հակոբյանի տվյալներում՝ առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգման պահանջվող աշխատանքների կատարած լինելը հավաստող փաստաթղթերը նորից չեն ներկայացվել:

. Մասնակցի ներկայացված շտկված փաստաթղթերում գործատու «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ն փոխարինվել է այլ գործատուով՝ «Արթմաշին» ՍՊԸ-ով, իսկ որմնադիր-վարպետները այլ աշխատակիցներով, որոնց տվյալներում՝ առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերանորոգման հրավերով պահանջվող աշխատանքների կատարած լինելը հավաստող փաստաթղթերում բացակայում են նմանատիպ աշխատանքներ կատարած լինելը հավաստող փաստաթղթերը: «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 5.2 հավելվածում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներ՝ Արմեն Մնացականյանի, Արշակ Գաբրիելյանի, Անդրանիկ Հայրապետյանի և Մովսես Շահվերդյանի աշխատանքային փորձը չի համարվում նմանատիպ: Մասնակիցը, որպես որմնադիրների կատարված աշխատանքների պայմանագիր, ներկայացրել է ՀՀ մշակույթի նախարարության հետ 19.07.2017թ. կնքված «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում /ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի

Մեծամորի սրբարանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ/ և ՀՀ մշակույթի նախարարության հետ 07.07.2016թ. կնքված «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՇՁԲ-16/80» ծածկագրով պայմանագրի շրջանակներում /Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի վերանորոգման/ աշխատանքների կատարած լինելը: Մինչդեռ այդ աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ մշակույթի նախարարության կողմից հայտարարված հրավերներում պահանջվող աշխատանքային ռեսուրսների մասով որմնադրի պահանջ չի եղել, ինչը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ այդ աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվներում որմնադրի կողմից կատարվելիք աշխատանքներ չեն նախատեսվել: Ընդ որում, «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5» ծածկագրով նախատեսված աշխատանքները ավարտված չեն և դրա կատարման ժամկետը սահմանված է 30.06.2018թ.

- 1.4 կետի համաձայն՝ «Արթմաշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի գծով առկա անհամապատասխանությունները չեն շտկվել:

- 1.5 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել անբավարար.

- 1.6 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատել անբավարար:

«Արթմաշին» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Արթմաշին» ՍՊԸ-ն մասնակցել է «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին և համապատասխան հայտարարությամբ հավաստել է, որ համապատասխանում է հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, մասնավորապես, «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներին, և աշխատանքների կատարման համար ունի համապատասխան տեխնիկական միջոցներ՝ ինքնաթափ մեքենա, ամբարձիչ, բետոնախառնիչ սարք, շարժական էլեկտրասնուցող սարք և շաղախի ներարկիչ սարք, ինչպես նաև որպես աշխատաքային ռեսուրս ներկայացված՝ բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում աշխատանքներ իրականացրած մասնագետներ:

Որպես պահանջվող տեխնիկական միջոցների առկայության ապացույց, Ընկերությունը ներկայացրել է ամբարձիչի, բետոնախառնիչ սարքի, շարժական էլեկտրասնուցող սարքի և

շաղախի ներարկիչ սարքի մասով գնման ակտերը, ապրանքի մատակարարման էլեկտրոնային հարկային հաշիվը, տեխնիկայի լուսանկարներ, որոնք ապացուցում են, որ տվյալ տեխնիկական միջոցները կազմում են Ընկերության հաշվեկշռի (բալանսի) մաս: Սակայն պատվիրատուի կողմից այս տեխնիկայի մասով պահանջվել է ներկայացնել պահանջվող սարքավորումների տեխնիկական անձնագրերը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ նշված տեխնիկական սարքավորումները Ընկերությունը ձեռք է բերել շուկայից՝ անհատ վաճառողից, առանց որևէ տեխնիկական փաստաթղթերի, և գտնում է, որ տվյալ պարագայում կարևորն այն է, որ «Արթմաշին» ՍՊԸ-ն ապացուցել է պահանջվող տեխնիկական միջոցների առկայությունը Ընկերության կողմից ներկայացրած համապատասխան փաստաթղթերով, իսկ նշված տեխնիկայի նկատմամբ տեխնիկական անձնագիր պահանջելն այն դեպքում, երբ տեխնիկական միջոցի տիպը Հրավերով սահմանվել է որպես «ցանկացած», այսինքն, չի նշվել տեխնիկական միջոցի կոնկրետ տեսակը, Ընկերության ներկայացուցչի կարծիքով, իմաստազուրկ է և անտրամաբանական: Ինչ վերաբերում է «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի հավաստման նպատակով Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումներին, ապա, ըստ բողոքաբերի, ինչպես շինարարական ծրագրերի իրականացման դեպքերում առհասարակ, այնպես էլ տվյալ դեպքում՝ աշխատանքները պետք է որակվեն նմանատիպ (կամ համանման)՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Սակայն Ընթացակարգի գնման առարկայի (ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերում) պարագայում պահանջված՝ բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի, ինչպես նաև որպես համանման սահմանված՝ բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի համապատասխան աշխատանքների կատարման պայմանագրերի պահանջի առկայության պայմաններում, Հանձնաժողովի կողմից սահմանվել են նաև «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի հավելյալ պահանջներ՝ համապատասխան աշխատակից, որի գործունեության ոլորտն է՝ միայն պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն և օգտագործումը, կատարած աշխատանքը՝ միայն պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայում, նորոգում կամ վերականգնում, իսկ մասնագիտական փորձը՝ միայն պատմության և մշակույթի հուշարձանի ոլորտը, ինչը, Ընկերության ներկայացուցիչների խոսքով, իրավաչափ

պահանջ չէ և անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

• 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:.

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

• 10-րդ կետի համաձայն՝ նույն կարգի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները.

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը.

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 42-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:.

• 62-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

• 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները հետևյալ ձևով՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը (ժամանակահատվածը և գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը), գործատուի անվանումը:

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների

անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

• 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.5.4. ա կետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

1-ին և 4-րդ չափաբաժինների մասով (ստորև ներկայացվող յուրաքանչյուր որակավորումով պահանջվող առնվազն 1 (մեկ) մասնագետ)՝

N	Որակավորումը	Մասնագիտական փորձը		
		գործունեության ոլորտը	կատարած աշխատանքը	նվազագույն մասնագիտական փորձը
1	ճարտարագետ-շինարար	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանք
2	հնագետ	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործում	նմանատիպ (ժամանակագրություն կամ շերտագրություն ունեցող) հուշարձանի տարածքի առնվազն մեկ ՝ պեղում	վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում հուշարձանի հնագիտական հետախուզման և պեղման 1 (մեկ) տարվա փորձ

3	որմնադիր վարպետ	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի (պատմաճարտարահետական) ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ ամրակայման, նորոգման կամ վերականգնման աշխատանք (ընդ որում՝ շաղախի ներարկման)

3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով (ստորև ներկայացվող յուրաքանչյուր որակավորումով պահանջվող առնվազն 1 (մեկ) մասնագետ)՝

	Որակավորումը	**Մասնագիտական փորձը**		
		գործունեության ոլորտը	**կատարած աշխատանքը**	**նվազագույն մասնագիտական փորձը**
1	ճարտարագետ-շինարար	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հնագիտական հուշարձանի ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման աշխատանք
2	որմնադիր վարպետ	պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն և օգտագործում	առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի (պատմաճարտարահետական) ամրակայում, նորոգում կամ վերականգնում	առնվազն 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ կամ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում առնվազն մեկ ամրակայման, նորոգման կամ վերականգնման աշխատանք (ընդ որում՝ շաղախի ներարկման)

Հրավերի 2-րդ մասի 2.5.4. բ. կետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

1-ին և 3-րդ չափաբաժինների համար՝

Տեխնիկական միջոցի անվանումը	**Տիպը**	**Պահանջվող քանակը**
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ
Շաղախի ներարկիչ սարք	ցանկացած	1 հատ

4-րդ չափաբաժնի համար՝

Տեխնիկական միջոցի	**Տիպը**	**Պահանջվող քանակը**

անվանումը		
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ
Շարժական էլեկտրասնուցող սարք	ցանկացած (220 վլտ.)	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ
Շաղախի ներարկիչ սարք	ցանկացած	1 հատ

6-րդ չափաբաժնի համար՝

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Ինքնաթափ մեքենա	ցանկացած	1 հատ
Ամբարձիչ	ցանկացած	1 հատ
Բետոնախառնիչ սարք	ցանկացած	1 հատ

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

- «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը Հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար այն հիմնավորմամբ, որ վերջինիս որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հրավերով պահանջվող ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացված աշխատակազմում ներառված մասնագետ՝ որմնադիր վարպետների տվյալներում բացակայել են առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգման աշխատանքներ կատարած լինելը հավաստող փաստաթղթերը.

- «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը Հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար այն հիմնավորմամբ, որ մասնակցի կողմից ներկայացված չեն առաջարկվող տեխնիկական միջոցներ՝ «Ամբարձիչի», «Շաղախի ներարկիչի» և «Էլեկտրասնուցող սարքի» տեխնիկական անձնագրերը:.

- Պատվիրատուի կողմից Հրավերով չեն սահմանվել պահանջվող տեխնիկական միջոցներին վերաբերող կոնկրետ պարամետրերը՝ տեսակը, մոդելը, մակնիշը և այլն.

- Պատվիրատուի ներկայացուցչի կողմից չվկայակոչվեց գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ դրույթ, որի հիման վրա Պատվիրատուի կողմից կարող էր առաջադրվել մասնակցի աշխատակազմում ներառված որմնադիր վարպետների կողմից առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ

վերականգման աշխատանքներ կատարած լինելը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ.

- «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգով ձեռք են բերվում շինարարական աշխատանքներ, իսկ շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից Հրավերով սահմանված «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերը՝ գնման ակտերը, ապրանքի մատակարարման էլեկտրոնային հարկային հաշիվները, տեխնիկայի լուսանկարները, հիմնավորում են, որ տվյալ տեխնիկական միջոցները Ընկերության հաշվեկշռի մաս են կազմում, և ապացուցում են Ընկերության սեփականության իրավունքը նշված տեխնիկական միջոցների նկատմամբ: Ինչ վերաբերում է սարքավորումների տեխնիկական անձնագրերը ներկայացնելու պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում նման պահանջն ըստ էության կիրառելի չէ, քանի որ Պատվիրատուի կողմից Հրավերով չեն սահմանվել պահանջվող տեխնիկական միջոցների կոնկրետ պարամետրերը՝ տեսակը, մոդելը, մակնիշը և այլն:

Հաշվի առնելով, որ «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից որպես աշխատաքային ռեսուրս ներկայացվել են բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում աշխատանքներ իրականացրած մասնագետների տվյալներ, իսկ շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ անբավարար գնահատելով Ընկերության «Մասնագիտական ռեսուրսներ» որկավարման չափանիշը այն հիմնավորմամբ, որ որմնադիր վարպետների տվյալներում բացակայել են առնվազն մեկ պատմության և մշակույթի հուշարձանի ամրակայման, նորոգման կամ վերականգման աշխատանքներ կատարած լինելը հավաստող փաստաթղթերը՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 64-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ և 65-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.5 կետով «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

3. Դադարեցնել «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.6-րդ կետով «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

4. Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արթմաշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ